ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 10 փետրվարի 2020թ.

2020 թվականի փետրվարի 10-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» և ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2019 թվականի կատարողականը հաստատելու մասին» որոշումների նախագծերի թեմաներով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրեն Միքայել Միքայելյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ Շուշիկ Ասատրյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող, համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին,
2. «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2019 թվականի կատարողականը հաստատելու մասին»

համայքնի ավագանու որոշմունների նախագծերի քննարկում:

Օրակարգի առաջին հարցի՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին»*** հարցի

շուրջ Շ. Ասատրյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող նախագիծը մշակվել է՝ առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով *(Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը)*, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N2-Ն հրամանով (*Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը և ժամկետները սահմանելու մասին*):

Համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 31-ի N 05-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 14-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը և ժամկետները սահմանելու մասին» N 2-Ն հրամանով հաստատված կարգի համաձայն համայնքի բոլոր բնակավայրերում իրականացրել է գույքագրում և գույքագրման տվյալները հանձնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Միքայել Միքայելյանը ներկայացրեց օրակարգի երկրորդ հարցը՝ ***«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2019 թվականի կատարողականը հաստատելու մասին»:*** Նա հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ 2020 թվականի փետրվարի 03-ին և 10-ին համայնքի ղեկավարին N 43/20 և N 58/20 զեկուցագրերով ներկայացրել է պոլիկլինիկայի 2020 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2019 թվականի կատարողականը՝ ավագանու հաստատմանը ներկայացրելու համար:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ *(Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով իրականացնում է Հայաստանի*

Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ), «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասի *(1. Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք սույն օրենքով և կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:*

Խորհուրդը պետք է ստեղծվի 50 և ավելի բաժնետեր ունեցող Ընկերությունում:

Մինչև 50 բաժնետեր ունեցող Ընկերությունում խորհուրդ չստեղծվելու դեպքում, նրա իրավասություններն իրականացնում է ժողովը: Այդ դեպքում կանոնադրությունը պետք է դրույթներ պարունակի այն անձի կամ Ընկերության այն մարմնի մասին, որն իրավունք ունի որոշումներ ընդունել սույն օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետի «բ-դ» ենթակետերով սահմանված հարցերի վերաբերյալ:), 84-րդ հոդվածի 1-ին մասի «իգ» կետի*(1. Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում իգ) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.)* համայնքի ավագանին հաստատում է «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2019 թվականի կատարողականը:

Որոշվեց՝

հավանություն տալ «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2019 թվականի կատարողականը հաստատելու մասին» որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Արման Խանզադյան

Արտյոմ Ավագյան